ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀՀ-ՍՄԿՀ- ԳՀԱՊՁԲ-17/2Ա>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան 19 սեպտեմբեր 2017թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ՝ Նորայր Հարությունյան,
անդամներ՝ Դավիթ Ղազարյան, Արմեն Ամիրջանյան, Նառա Թումանյան, Հովհաննես Մինասյան
քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

Գնման ընթացակարգի գնահատման արդյունքները հաստատելու մասին
(Ն. Հարությունյան)

1. Ընդունել ի գիտություն, որ

ա/ <<Երվադա>> ՍՊԸ կողմից ներկայացվել են՝

-մասնակցի որակավորման չափանիշները հիմավորող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

-ապրանքի ամբողջական նկարագիրը, որտեղ հանձնաժողովի անդամների գնահատմամբ տեղ է գտել անհամապատասխանություն. մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը հստակ չէ՝ հստակեցված չեն չափերը, պահպանված է բնութագրերի <<կամ համարժեքը>> պայմանը:

բ/ստացվել է հարցմանն ի պատասխան ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տրված տեղեկատվությունը

-ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ մասնակիցը չունի հարկային պարտավորություններ,

-հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ, որը պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից,

-հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի վերաբերյալ՝ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է պարտավորությունների հաշվեկշռային արժեքը:

2. Հանձնաժողովը որոշեց՝

-հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N526-Ն որոշման Հավելված 1-ի 47-րդ կետը, էլեկտրոնային եղանակով ծանուցել <<Երվադա>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը,

-հանձնաժողովի նիստը շարունակել մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Գնման ընթացակարգի գնահատման արդյունքները հաստատելու մասին նիստի շարունակություն

19 սեպտեմբեր 2017թ.
Ժամը 17:00

1.Ընդունել ի գիտություն, որ <<Երվադա>> ՍՊԸ կողմից շտկվել են իր կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում տեղ գտած անհամապատասխանությունները:

2.Հանձնաժողովը որոշեց՝

հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքների և գնահատման թերթիկների հիմքով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից <<Երվադա>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և <<Երվադա>> ՍՊԸ ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ ..... Ն. Հարությունյան

անդամներ ..... Ն. Թումանյան

..... Հ. Մինասյան

..... Դ. Ղազարյան

..... Ա. Ամիրջանյան

Քարտուղար՝ ..... Լ. Ավետիսյան